

ՆՏ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՆՈՎՆԱՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆ

ՌՈՒՄԱՆՅԱՆԸ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ
ՀՈՒՇԵՐՈՒՄ

ՆԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

(Լրամշակված հրատարակություն)

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ

ԹՈՒՄԱՆՅԱՆԸ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ
ՀՈՒՇԵՐՈՒՄ

Հայկական ՍՍՀ ԳԼԻ հրատարակչություն

ԵՐԵՎԱՆ · 1969

ՆՏԴ 821.19.0
ԳՄԴ 83.3(5Ն)
Թ 950

Նատորը հրատարակվում է ՆՏ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարության աջակցությամբ:

Տպագրվում է ՆՏ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի և
Նովհ. Թումանյանի թանգարանի գիտական խորհուրդների որոշմամբ:

Թ 950 Նովհաննես Թումանյանը ժամանակակիցների հուշերում.-
լրամշակված հրատարակություն.- Եր.: Նովհ. Թումանյանի
թանգարան, 2019. Նատոր առաջին.- 624 էջ. - (Արևելք-Արևմուտք
մատենաշար):

ՆՏԴ 821.19.0
ԳՄԴ 83.3(5Ն)

ISBN 978-9939-858-26-5

© ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, 2019
© Հովհ. Թումանյանի թանգարան, 2019

**«Թումանյանը ժամանակակիցների հուշերում» ժողովածուի
վերահրատարակման խմբագրական
խորհրդի կազմը**
(ցանկը բերվում է այբբենական կարգով)

Դերիկյան Վարդան (բ.գ.դ.), Եղիազարյան Անի (բ.գ.թ.), Իսահակյան Ավետիք, (բ.գ.դ., պրոֆ.), Գիրակոսյան Վլադիմիր (բ.գ.դ., պրոֆ.), Մարգարյան Սիրանուշ (բ.գ.թ., դոցենտ), Մկրտչյան Նունե (բ.գ.թ., դոցենտ), Մնացականյան Եվա (բ.գ.թ., դոցենտ), Որսկանյան Հերիքնազ (բ.գ.թ.), Վարդանյան Անահիտ (բ.գ.թ.), Վարժապետյան Իրիտա

Վերահրատարակության բնագրերը պատրաստեց՝

Սուսաննա Աղամյանը

Ծանոթագրությունները լրամշակեց՝

Վլ. Գիրակոսյանը

Հատորի խմբագիր՝ Վլ. Գիրակոսյան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈՒՆԳԻՍ

ՔՈՒՄԱՆՅԱՆ Ն. Հ., ԻՆՃԻԿՅԱՆ Ա. Մ., ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Լ. Մ.,
ՀԱԿՈՑՅԱՆ Պ. Հ., ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ա. Գ., ՆԱԼԲԱՆԻՅԱՆ Վ. Ս.,
ՆԱՀԱՊԵՏՅԱՆ Մ. Հ., ՋՐԲԱՇՅԱՆ ԷԳ. Մ., ՍԱՐԻՆՅԱՆ Ս. Ն.

Տե՛ֆտը պատրաստեց՝ և ծանոթագրեց՝
Լ. Մ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Խ մ բ ա գ ի ր ն ե ռ՝

Ա. Մ. ԻՆՃԻԿՅԱՆ, Պ. Հ. ՀԱԿՈՑՅԱՆ

ՎԵՐԱՏՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

«Թումանյանը ժամանակակիցների հուշերում» ստվար միհատորյակը Նայկական ՍՄՏ գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի կողմից պատրաստվել ու հրատարակվել է 1969 թվականին՝ բանաստեղծի ծննդյան 100-ամյակի առթիվ: Ընդգրկում է ժամանակակիցների 95 հուշապատում՝ գրի առնված հիմնականում 1930-ական թվականներին: Գրական-պատմական առումով՝ դա իրոք նշանակալից երևույթ էր և տասնամյակների ընթացքում անշուշտ կատարել է իր դերը՝ որպես արժեքավոր թումանյանագիտական սկզբնաղբյուր:

Բայց այդ հրատարակությունից հետո կես դար է անցել, շատ բան է փոխվել թումանյանագիտության և ընդհանրապես հասարակության մշակութային գիտակցության մեջ, և հուշերի այդ միհատորյակը ներկա վիճակով այլևս չի կարող բավարարել ժամանակակից ընթերցողին: Բացի դրանից, գրականության ինստիտուտում պահվում է ժամանակակիցների մոտ յոթ տասնյակ հուշապատում՝ հեղինակային ինքնագրով կամ մեքենագիր, որոնց վրա ժամանակին որոշ խմբագրական աշխատանք է կատարվել, բայց չեն տպագրվել՝ ծավալային կամ այլ նկատառումներով, մինչդեռ դրանց մեծ մասը որոշակի հետաքրքրություն է ներկայացնում: Նկատի ունենալով այս երկու կարևոր հանգամանքը, նաև այն, որ բանաստեղծի ծննդյան 150-ամյա հոբելյանին նվիրված լայնամասշտաբ միջոցառումները հասարակության շրջանում հետաքրքրության նոր բունկում են առաջ բերել նրա կյանքի և ստեղծագործության նկատմամբ՝ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի և Թումանյանի թանգարանի գիտական խորհուրդները համատեղ որոշել են վերահրատարակել բանաստեղծի մասին ժամանակակիցների հուշերը՝ երկու հատորով:

Առաջին հատորն ընդգրկում է նախորդ հրատարակության ծավալի մոտ երկու երրորդ մասը, երկրորդը՝ մնացած մասը և հիշված անտիպ նյութերը՝ անհրաժեշտ ընտրությամբ, սրբագրումներով, խմբագրումներով ու ծանոթագրումներով:

Նոր հրատարակության մեջ պահպանված է նախորդի կառուցվածքը, այսինքն՝ հուշերը դասավորված են նույն կարգով: Բնագրերում կատարվել են հարկ եղած սրբագրումներ, ծանոթագրությունների բաժնում՝ անհրաժեշտ վերանայումներ, հշգրտումներ ու լրացումներ՝ հետևյալ կարգի.

1. Բնագրերի բաժնում միհատորյակի խմբագրությունը, ժամանակի պա-

հանջով և այլ նկատառումներով, կատարել է որոշ կրճատումներ: Պահպանված ինքնագրերի հիման վրա դրանք վերականգնվել են՝ համապատասխան նշումով ծանոթագրությունների բաժնում:

2. Բոլոր հղումները, որ կատարված են Թումանյանի երկերի վեցհատորյա ժողովածուից (1940-1959), փոխարինվել են նորերով՝ ըստ վերջին տասնհատորյա ակադեմիական հրատարակության (1988-1999):

3. Միհատորյակի հուշագրություններում հիշատակված որոշ փաստեր կամ փաստաթղթեր ժամանակին հայտնի չեն եղել հատորը կազմողին, որոնց մասին նա ակնարկում է ծանոթագրություններում: Դրանց մեծ մասը հետագայում հայտնաբերվել և հրապարակվել է: Նոր հրատարակության ծանոթագրություններում դրանք ներկայացվում են ստույգ աղբյուրներով: Օրինակ՝ Լ. Շանթի 1907 թ. մայիսի 6-ի նամակը իշխանուհի Մ. Թումանյանին:

4. Ժամանակին չտպագրված փաստաթղթերի աղբյուրները միհատորյակում նշվում են՝ ըստ արխիվային համարների: Նոր հրատարակության մեջ դրանք նշվում են՝ ըստ հրատարակության տեղի և ժամանակի: Իսկ եթե նախորդ ծանոթագրություններում երբեմն չտպագրված որոշ փաստաթղթեր բերվում են ամբողջությամբ, ապա նորերում դրանք դուրս են թողնված: Օրինակ՝ Թումանյանի՝ 1893 թ. գրությունը Նրատարակչական ընկերության նախագահ Ալ. Քալանթարյանին:

5. Նուշերում բերված որոշ փաստական տվյալներ ճշգրտելու համար նախորդ հրատարակության ծանոթագրություններում հաճախ կատարվում է մանրամասն քանասիրական հետազոտություն (օրինակ, որդուն՝ Արեգին, գրած Թումանյանի մի նամակի ժամանակը՝ 1921, հուլիսի 11, ճշգրտելու համար), որ ժամանակին արդարացված է եղել: Բայց նոր հրատարակության մեջ դրանց մի մասը դուրս է թողնված, քանի որ Թումանյանի երկերի լիակատար ակադեմիական հրատարակությունը արդեն տալիս է նման հարցերի հիմնավոր պատասխանը:

6. Նուշագիրները մասնագիտությամբ, անհատական խառնվածքով, բանաստեղծի հետ ունեցած հարաբերությունների բնույթով խիստ բազմազան են: Բայց բոլորի նպատակը մեկն է՝ սերունդներին ավանդել բանաստեղծի իրական կերպարը, ինչպիսին տեսել ու ճանաչել են իրենք: Այդ բազմազանության մեջ ընթերցողին կողմնորոշելու համար վերահրատարակության խմբագրությունը նպատակահարմար է գտել ծանոթագրություններից առաջ զետեղել մի համառոտ ակնարկ՝ «Նովհաննես Թումանյանի դիմանկարը ժամանակակիցների հուշերում» թեմայով:

Ի Ն Ս Տ Ի Տ Ո Ի Տ Ի Կ Ո Ղ Մ Ի Յ

Գրականության ինստիտուտը սույն ժողովածուով հիմք է դնում հայ դասական հեղինակներին նվիրված հուշագրական մատենաշարի:

«Քումանյանը ժամանակակիցների հուշերում» ժողովածուն ունի իր «նախապատմությունը»: 1935 թվականին Հայաստանի պատմության և գրականության ինստիտուտը, սկսելով Քումանյանի երկերի գիտական հրատարակության նախապատրաստական աշխատանքները, միաժամանակ ձեռնարկում է մեծ բանաստեղծի մասին երա ժամանակակիցների հուշերի հավաքման գործը: Ինստիտուտը դիմում է Քումանյանի դպրոցական ընկերներին և գրչակիցներին, երան նանաշող ու բարեկամ արվեստագետներին, հասարակական-ֆալաֆական գործիչներին՝ խնդրելով գրել իրենց հուշերը: Մեկ-երկու տարում հավաքվում է շուրջ հարյուր հուշ: Այդ գործում մեծ եռանդ է ցուցաբերում բանաստեղծի դատար նվարդ Քումանյանը: Նա է վարում նամակագրությունը հուշագրողների հետ, ինչպես և հուշերի մի մասի վրա կատարում փաստագրական դիտողություններ խմբագրության համար:

Սակայն հուշերի ժողովածուի ապագության գործը 30-ական թվականների վերջերին բնդհատվում է:

Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը 1966 թվականին Քումանյանի ծննդյան 100-ամյա հոբելյանի միջոցառումների ծրագրի մեջ մտցրեց հուշերի հրատարակությունը և վերսկսեց աշխատանքները:

Նախկինում հավաքված հուշերին ավելացվեցին հետագա տարիներին գրված և մասամբ մամուլում հրատարակվածները: Ժողովածուում չեն գետեղվել այն հուշերը, որոնք զուրկ են հավաստիությունից և որևէ նոր բան չեն ավելացնում արդեն հայտնի փաստերին:

Ժողովածուն պատրաստված է հետևյալ սկզբունքով:

Առաջին յոթ հուշերը (Ավ. Իսահակյանի, Գ. Գեմիրեյանի,

Լեոյի, Ստ. Զորյանի, Վ. Թորոպենցի, Զ. Նսայանի, Մ. Ավետիսյանի) առանձնացված են, նկատի ունենալով, որ այդ հուշերում համեմատաբար ավելի ամբողջական է բանաստեղծի դիմանկարը: Մնացածները, հնարավորության սահմաններում, դասավորված են ըստ Թումանյանի կյանքի ժամանակագրության (հաշվի է առնրված, թե ե՛րբ է հուշագրողը առաջին անգամ հանդիպել բանաստեղծին):

Առաջին անգամ տպագրվող հուշերում կրճատված են Թումանյանի հետ առնչություն չունեցող և հասարակական հետաքրքրություն չներկայացնող մասերը, կրկնությունները (մանավանդ այնպիսի հատվածները, ուր դեպքերը պատմվում, նկարագրվում են ոչ ականատեսի կողմից և հավաստի չեն):

Մինչև այս ժողովածուն տպագրված հուշերի մեծ մասը վերատպվում է նույնությամբ: Մասնակի կրճատումների մասին նշված է ծանոթագրություններում: Ստուգված և նշտված են բոլոր փաստերն ու թվական տվյալները, ինչպես և մեջբերումները:

Փաստական, բանասիրական նշումները գերազանցապես արված են ծանոթագրություններում: Առաջին անգամ հրատարակվող հուշերում սխալներն ուղղված են տեխտում, իսկ ծանոթագրությունների մեջ ցայց է տրված, թե ինչպես է եղել բնագրում:

«Թումանյանը ժամանակակիցների հուշերում» ժողովածուի լեզվական խմբագրությունը կատարել, տպագրության պատրաստել և ծանոթագրել է ինստիտուտի ավագ գիտական աշխատակից Լուսիկ Կարապետյանը: Հուշերի ընտրությանը գործուն մասնակցություն է ունեցել բանաստեղծի ավագ դուստր Աշխեն Թումանյանը: Տեխտերի նախնական համեմատության և ծանոթագրությունների նյութերի հավաքման աշխատանքներին մասնակցել են կրտսեր գիտական աշխատակից Անահիտ Վարդանյանը և աշխատակից Իրիտա Վարժապետյանը: Ան. Վարդանյանը կազմել է նաև Անվանացանկ-առարկայացանկը:



ԱՎԵՏԻՔ ԻՄԱՏԱԿՅԱՆ

ՏՈՎՏԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Գևորգյան հեմարանում աշակերտ եղած ժամանակս՝ 1892 թվին, մի քարեկամ ուղարկել էր ինձ Տովհ. Թումանյանի բանաստեղծությունների առաջին հատորից մի քանի օրինակ, որ վաճառեի ընկերներիս մեջ:

Նույն թվի աշնանը, երբ Թիֆլիս էի, գնացի Թումանյանի մոտ վճարելու գրքի գինը և այդ առիթով ծանոթանալու նրա հետ:

Ներկայացա նրան: Նա պաշտոն ուներ Կովկասի հայոց հրատարակչական ընկերության մեջ. ի՞նչ էր պաշտոնի անունը՝ չեմ հիշում, սակայն միշտ ընկերության գրասենյակում էր¹: Նա քաղցրությամբ ընդունեց ինձ, հարցրեց, թե ի՞նչ տպավորություն է թողել գիրքը աշակերտների վրա:

Մեր ուսուցիչ, բանաստեղծ Տովհ. Տովհաննիսյանի համեմատությամբ առաջին գիրքը մենք գտել էինք թույլ, քայց զգացել էինք տաղանդի շունչը:

– Մենք շատ սիրեցինք ձեր պոեզիայի ժողովրդային տարերքը, – պատասխանեցի ես և արտասանեցի, իբրև ապացույց, որ սիրում ենք, մի երկու ոտանավոր այդ ոճով գրածներից, որ անգիր էի արել:

Թումանյանն ուրախ ժպտաց և իսկույն նվիրեց ինձ բանաստեղծությունների երկրորդ հատորը, որ նոր լույս էր տեսել: Առաջին հանդիպումով շատ հանելի տպավորություն ստացա Թումանյանից: Վարմունքը պարզ էր և ընկերական: Նրա դեմքը ողողված էր, կարծես, մի ներքին լույսով: Փարթամ մազերով, աչքերը խոր ու խոհուն: Ժպիտը միշտ ներկա էր դեմքի վրա: Տաղիվ քսան և չորս տարեկան էր, ուրախ, զվարթ, երիտասարդ:

Տաղորդ այցելությանս արտասանեցի անգիր արած մի քանի ոտանավորներ նոր հատորից:

– Վահ, – բացականչեց նա, – ի՞նչ լավ հիշողություն ունեք: Ես իմ գրածներից ո՛չ մի տուն չեմ հիշում:

Նետագա հանդիպումներին, սիրտ արեցի, հայտնեցի, թե ես էլ եմ ուսանավոր գրում:

– Ջգում էի,– ասաց նա,– խնդրեմ մեկ բերեք տեսնեմ: Ուսանավորներիցս ընտրեցի մի տասը-տասնհինգ հատ և հանձնեցի նրան:

Օրեր անցան, սպասում էի, որ կարծիք հայտներ դրանց մասին, բայց նա լռում էր: Մտածեցի, որ չի հավանել և երբեք էլ չհետաքրքրվեցի: Թումանյանի մոտ ծանոթացա Ղազարոս Աղայանի հետ, որ գալիս էր հայրական գյուղից, ուր նա ապրում էր այդ ժամանակ: Նաստ պալտո հագած, վալենկաներով, կալոշներով, գյուղից՝ ուղղակի Օհաննեսի մոտ: Նրանք ջերմաջերմ գրկախառնվեցին, համբուրվեցին, կարծես երջանկացան իրար տեսնելով: Շատ նման էին նրանք իրար. երկուսն էլ միևնույն ատաղձից, հայ ժողովրդի նյութից կերտած և միևնույն ոճով ձևավորված: Նաև մեծ մտերմություն տեսա նրանց միջև, իսկ հետագա տարիներում համոզվեցի, որ ամբողջ աշխարհում նրանք իրար ամենամոտ մարդիկն են: Օհաննեսը նրան կոչում էր «Ասլան ապեր», նա էլ Օհաննեսին՝ «Ասլան բալասի», հետո երկուսով ծիծաղելով, ասում էին. «էլ ո՛վ կարող է մեզ հաղթել»:

1985 թվի ձմեռնամուտին Օհաննեսը երևաց Ալեքսանդրապոլում: Իջել էր հյուրանոց, ես տեղափոխեցի մեր տունը: Մի շաբաթ մնաց Ալեքսանդրապոլում: Գալիս էր Թիֆլիսից՝ Ախալցխայի և Ախալքալաքի վրայով, գնում էր Երևան, Էջմիածին: Ինչ-որ միսիայով էր շրջում նա²: Նայ կյանքը ալեկոծված էր արևմտահայերի ջարդերի սարսափելի լուրերով և ջարդերի ականատես, փախած հայ գաղթականների սրտակեղեք պատմություններով: Ամեն գիտակից հայ ծանր մտահոգություններ ուներ արևմտահայերի և հայկական հարցի ճակատագրի նկատմամբ: Անշուշտ, Օհաննեսի ուղևորությունը կապված պիտի լիներ այդ դրության վերաբերյալ գործերի հետ: Այդ օրից անցել է ավելի քան 50 տարի և մոռացել եմ, թե ի՞նչ էր Օհաննեսի դերը այդ գործերի մեջ, թեև նա անվերջ տեսակցությունների մեջ էր քաղաքի ինտելիգենցիայի և հասարակության ներկայացուցիչների հետ, հետաքրքրվում էր գաղթականների վիճակով և տետրակներ էր լեցնում նրանց պատմածներով³:

Այդ օրերից մնում է ինձ մոտ մի թանկագին հիշատակ, մի թղթի կտոր՝ Օհաննեսի ձեռագիրը՝ «Երկու սև ամպ» քանաստեղծությունը, որ նոր էր գրել:

Չմեռվա ցրտերին Օհաննեսին ճանապարհ դրինք Երևան:

1896 թվի գարնանը Թիֆլիսումն էի: Այդ ժամանակ նոր էի ծանոթացել Դերենիկ Դեմիրճյանի հետ, որ Ներսիսյան դպրոցի աշակերտ էր: Մի երեկո նրան տարա Թումանյանի մոտ. Օհաննեսն արդեն կարդացել էր «Մուրն» ամսագրում տպված նրա բանաստեղծությունները և գովեստով արտահայտվեց դրանց մասին⁴: Խոսեցինք գրական նյութերից, ապա Օհաննեսը կարդաց «Մծիբիի» իր նոր կատարած թարգմանությունը, որը մենք հավանեցինք, մեկ-մեկու նկատողություններ անելով:

Դերենիկը գնաց: Ես գիշերեցի Օհաննեսի մոտ: Տխուր շրջան էր. ցարական հայահալած քաղաքականությունը չարագին բնույթ էր ստացել, կառավարությունը փակել էր հայոց դպրոցները, իրար ետևից փակում էր հայ թերթերը, գրադարանները և կուլտուրական հիմնարկները. բանտերը լցվել էին արևմտահայերի ազատագրական շարժման համակրողներով. բանտարկված էին Ղ. Աղայանը, Շիրվանզադեն⁵:

Իսկ Թուրքիայում հայ ժողովուրդը խեղդվում էր արյան մեջ: Ցարական կառավարությունը թշնամական բացարձակ դիրք էր բռնել հայկական հարցի հանդեպ: Ստամբուլի ցարական դեսպան Նելիտովը խրախուսում էր սուլթան Նամիդի շարդերը: Մեզ հայտնի էր արտաքին գործերի մինիստր Լոբանով-Ռոստովսկու բարբարոս ցանկությունը՝ տեսնել «Նայաստանը առանց հայերի»:

Սոսկալի մռայլ էր կացությունը. ո՛չ մի տեղից օգնություն չկար⁶:

– Ես հասկանում եմ թուրքերին. սուլթանի վարմունքն ինձ չի զարմացնում. բայց ցարական պետության վարմունքն իսկի չեմ հասկանում. հայ ժողովուրդն ամբողջովին ռուսասեր է, ռուս պետության նվիրված,– տխրությամբ ասաց Օհաննեսը և մտասուզված լռեց. ապա մի պահ անց՝ շարունակեց.

– Ցարական պետությունը չի նանաչում ո՛չ իր բարեկամին, ո՛չ իր թշնամուն... մեր դժբախտությունը դրա մեջ է...

Ուշ գիշեր էր, երբ պատրաստվեցինք քնելու: Օհաննեսը լամպը ձեռքին կանգնել էր անկողնուս մոտ:

– Այ տղա, շատ մի՛ տխրիր, վերջը լավ կլինի: Նայ ժողովուրդը ավելի ծանր օրեր է տեսել: Մի՛ հուսահատվիր, ես էլ կանցնի:

Առհասարակ լավատեսությունը գերակշռում էր Օհաննեսի հոգում. ընկճվածությունը մի վայրկյան էր նրա մոտ: Նավատով էր մեր հակատագրի հանդեպ և պայծառ հեռանկարներ էր տեսնում հայ ժողովրդի առաջ:

Այդ հավատը վարակեց ինձ, ես թեթևացած կարողացա քնել:

1898 թվի սկզբներին, ցարական ժանդարմերիայի կարգադրությամբ ես մի տարով աքսորվում էի Օդեսա քաղաքը⁷: Աքսոր գնալիս, նանապարհին կանգ առա Թիֆլիս և անմիջապես գնացի Օհաննեսի մոտ: Արդեն օրենք էր դարձել, որ Թիֆլիս գտնվելիս, անպատճառ պիտի լինեի նրա մոտ, գրեթե ամեն օր:

Երեկոյան բավական հյուրեր եկան և մեկնեցին ուշ գիշերին. երբ մնացինք մենակ, Օհաննեսը կարդաց «Ղեպի Անհունը» պոեմը, որ վաղուց էր գրել, հիմա վերամշակել էր, տակավին ոչ վերջնականապես: Ասում էր, պոեմի նյութը վավերական է, ճշգրիտ իրողություն: Պոեմն ինձ վրա տպավորություն թողեց: Անհանգիստ գիշեր ապրեցի: Երևակայությունս հուզված էր և անհեթեթ երազներ տեսա: Առավոտյան երազներս պատմեցի Օհաննեսին: Նա էլ թե՛ «Սա լավ նշան է, որ պոեմս ազդեցություն է թողնում, բայց իմ պոեզիայի ոճին չի բռնում: Խորթ զավակ է այս պոեմն ինձ համար, նյութն էլ, գրելաձևն էլ: Բայց թող լինի, իմանան, որ ֆոլկլորից դուրս էլ կարող եմ բան գրել»:

Այս միամիտ բացատրությունը շատ զվարճացրեց ինձ:

1899 թվին աքսորից վերադարձիս մի քանի օրով մնացի Թիֆլիսում, եղա Օհաննեսի մոտ: Օհաննեսին գտա շատ ընկեմած, շատ խլտուր: Նոր էր դարձել Դսեղ գյուղից, ուր գնացել էր հոր հուղարկավորությանը⁸:

– Միրելի հորս թաղեցի: Սրանից ավելի ի՞նչ մեծ վիշտ կա՝ սիրածին թաղել..., – խորին թախծությամբ ասաց նա:

Օհաննեսը շատ էր սիրում հորը և միշտ էլ մեծ հիացմունքով էր խոսում հոր մասին: Տարիներ հետո էլ առանց աչքերը արցունքով լցվելու չէր կարող խոսել նրա մասին:

Գիշերը մնացի մոտը, և մինչև ուշ գիշեր պատմում էր հանգուցյալ հոր բարությունից, ազնվությունից, առաքինություններից:

Օհաննեսը կենտրոնաձիգ անձնավորություն էր՝ հյուրասեր, մարդամոտ: Զրույցի համար հոգի էր տալիս: Օրվա որ ժամին գնալիք նրա մոտ, ձեռքի գործը կթողներ և, ժպիտը դեմքին, կնստեր զրույցի:

Ղ. Աղայանը, Դ. Դեմիրճյանը, ես և մեր մյուս ընկերները կանոնավոր կերպով, շաբաթը մեկ-երկու անգամ հավաքվում էինք նրա մոտ իրար տեսնելու և զրույց անելու: Այսպիսով նրա տունը դարձել էր մեր հավաքատեղին: Թեյ էինք խմում, ընթրում, խոսում: Չմեռը վատվոուն բուխարիկի շուրջ նստած՝ կատակում էինք, անվերջ զրույց անում, խոսում, վիճում:

Առաջին խոսքը պատկանում էր Ղ. Աղայանին, որին Նահապետ էինք անվանում: Գրականության Նահապետ: Նրան հարգում էինք բոլորս և սիրում: Ուշադրությամբ էինք լսում նրա կարծիքները, դիտողությունները: Մեր երեկույթներին, զիջելով մեր թախսանձանքներին, Աղայանը երգում էր իր սիրած Զյորոլլու ասպետական երգերը, իրեն՝ Աղայանի հայացրած թարգմանությամբ: Պարթև հասակով կանգնում էր նա, հուժկու ձեռքերը շարժելով, բամբ ձայնով կատարում էր «Զյորոլլին»:

Ընթերցում էինք մեր նոր գրած բաները, քննադատում, կարծիքներ փոխանակում: Խոսում էինք հայ, ռուս, և օտար գրական նորությունների մասին, հաղորդում իրար մեր տպավորությունները:

Ի՛նչ նյութի շուրջը ասես՝ չէր դառնում մեր գրույցը: Խոսում էինք հասարակական և քաղաքական երևույթների մասին: Խոսում էինք ազգերի պատմություններից, ժողովուրդների կյանքից, արվեստներից, փիլիսոփայությունից և մանավանդ գրականությունից: Կարդում էինք դասական հեղինակներից՝ արևմուտքի և արևելքի, նույնպես նոր հեղինակների գործերը: Մեզանից յուրաքանչյուրը իր սիրած հեղինակն ուներ, որ ի մի գումարած՝ ընդգրկում էր վերջ ի վերջո գրեթե բոլոր հանճարները: Կարդում էինք ժողովուրդների ֆոլկլորից և հիանում էինք ժողովուրդների անկեղծ ստեղծագործություններով՝ ռուսական բիլինաներով, սերբական պոեմներով, մեր «Սասունցի Դավթով» և շատ ուրիշներով: Մեր բոլորի սիրածն էր Սայաթ-Նովան, որին բարձրացրինք հանճարների դասին, ունեցանք պաշտամունք նրա հանդեպ, մեր բոլոր խնջույքներում երգում էինք նրա տաղերը, որոնք գրեթե մոռացված էին: Վստահ կարող ենք պարծենալ, որ մենք վերակենդանացրինք նրան, տարածեցինք նրա համբավը և արծարծեցինք նրա երգերը:

Ինքնաբերաբար մեր հավաքույթների առաջին շրջանում, լուրջ թե կատակով, փափագ զարթնեց մեր գրական խմբակին, մեր հավաքույթներին անուն տալ: Օհաննեսն ասաց, թե Գոնկուր եղբայրներն իրենց գրական խմբակն ունեին (որի անդամներն էին՝ Էմիլ Զոլա, Ալֆոնս Դոդե, Տուրգենև, Նյուիսմանս...), որ հավաքվում էր Գոնկուրների տան վերնահարկում, որին «Ամբար» անունն էին տալիս: Նույն նմանողությամբ, չեմ հիշում ո՛ւմ կողմից, առաջարկվեց «Վերնատուն» անունը. իսկույն հավանություն տվինք, գտնելով այն շատ պատշաճ և տեղին, որովհետև Օհաննեսի բնակարանը այն ժամանակ չորրորդ հարկումն էր: Կնքեցինք «Վերնատուն» անունով մեր հավաքույթների վայրը:

Այդ անունն այլևս ընդմիջտ կապվեց մեզ հետ և քաղաքացիություն ստացավ: Նասարակության մեջ պարզապես կիրառվում էր՝ «Վերնատան անդամները»:

«Վերնատունը» երբեմնակի հյուր էին գալիս գրողներ, արվեստագետներ, պատմաբաններ, լեզվաբաններ կամ գրականասեր մարդիկ՝ Պ. Պոռշյանը, Մուրացյանը, Վ. Փափագյանը, Կոմիտասը, նկարիչներ՝ Գ. Բաշինջաղյանը, Փ. Թերլեմեզյանը և շատերը:

Անմոռանալի գեղեցիկ ժամեր ենք անցրել «Վերնատանը», իմաստավորված, բովանդակալից, ներշնչող պահեր: «Վերնատունը» ապրեց 7-8 տարի: Անդամների բացակայության և ցրվածության հետևանքով նա դադարեց գոյություն ունենալուց 1906-7 թվականներին:

«Վերնատանը» տեղի ունեցած զրույցներից հիշում եմ Օհաննեսի մի քանի խոսքերը գրականության մասին.

– Իզուր ջանք է՝ անտաղանդ մարդկանց օգնել՝ գրող դառնալու համար: Իր եղջյուրները պախրան ինքը պիտի շինե:

– Ո՛չ մի քննադատ չի կարող իմ լավ ոտանավորը վատացնել և վատ ոտանավորը՝ լավացնել:

– Բանաստեղծությունը չի գրվի հանգով ու վանկով, այլ սրտով ու զգացմունքով:

– Գրականությունը հայրենիք չունի, բայց յուրաքանչյուր հայրենիք իր գրականությունն ունի:

1901 թվի սեպտեմբերին Օհաննեսը Ալեքսանդրապոլ եկավ Աբասթումանից, ուր նա բժշկվում էր⁹: Ճանապարհին կանգ էր առել Ախալքալաքում, այցելել էր Փարվանա լիճը, որի հայտնի լեգենդի մասին վաղուց ի վեր մտորում էր: Լսել էր Թմկաբերդի լեգենդը: Չէր կարողացել գնալ բերդը տեսնելու, սակայն Աբուլ սարի լանջերից դիտակով նայել էր բերդին, որի բուրգերը հեռվից աղոտ ուրվագծվում էին:

Խանդավառ խոսում էր Փարվանայի ու Թմկաբերդի լեգենդների մասին. նրա երևակայության մեջ կամաց-կամաց կենսագործվում էին այդ չքնադ պոեմները:

Տիշում եմ այսօրվա պես, որ նա «Թմկաբերդի» նախերգանքի առաջին փորձը արտասանեց, մեծ հիացմունք պատճառելով ինձ:

Ալեքսանդրապոլում իրար ողջագուրումից անմիջապես հետո, Օհաննեսն ասաց.

– Անի դեռ չեմ եղել, շատ եմ ուզում տեսնել, անպատճառ գլուխ բեր եղ

բանը, շատ եմ խնդրում:

– Աչքիս վրա, դրանից էլ հեշտ բան ի՞նչ կա:

Մի երկու օր անց բանաստեղծ Նովհաննես Կոստանյանի հետ, որն իմ մորաքրոջ որդին էր, հանապարհ ընկանք դեպի Անի¹⁰: Կանգ առանք մեր տանը՝ Ղազարապատ գյուղում, հանգստանալու և մորս տեսնելու:

Օհաննեսը մեր ջրաղացի վարպետին և գյուղացիներին, որոնք հեքիաթներ և ժողովրդական երգեր գիտցողներ էին, հարցնում էր «Նազարան բըլբուլի» մասին, գիտե՞ի՞ն արդյոք, և ուրիշ ֆոլկլորի նյութերի մասին: Ժամերով գրույց էր անում նրանց հետ և լսածները գրում տետրակի մեջ:

Երկու գիշեր միայն կարողացանք մնալ մեր տանը: Օհաննեսը անհամբեր էր, ուզում էր շուտով տեսնել Անին:

Մեր գյուղից մինչև Անի հազիվ մի 25 կիլոմետր լիներ:

Այցելեցինք Տոռոմոսի նշանավոր վանքին, որի նախագավիթը սքանչելիք է: Նովհ. Կոստանյանը մեզ նկարեց Աշոտ Ողորմած թագավորի աջ-ձախ կողմում կանգնած:

Մոտենում ենք Անիի հոյակապ պարիսպներին և բուրգերին: Օհաննեսը հուզված է, ոչինչ չի ասում, միայն արագացնում է քայլերը, հայացքը շարունակ պարիսպներին:

– Ի՞նչ ես շտապում,– ձայնում եմ ես, – Սմբատ թագավորը դեռ քո գալու մասին լուր չունի:

Օհաննեսը դառնում, խոժոռ նայում է ինձ և լայն քայլեր նետում: Օհաննեսը մտածում էր մի դրամա գրել Անիի կյանքից. նյութը Նովհաննես Սմբատ Բագրատունի «Քանձրամիտ ու Քանձրամարմին» թագավորն էր, որ իմաստունի համբավ ուներ¹¹:

Ես դրա մասին էի ակնարկում, որ Օհաննեսին տհաճություն պատճառեց:
Վերջապես ավագ դռան առաջն էինք...

Օհաննեսը կանգնեց և ուղղակի քնեովեց իր տեղում: Երկար, լռելային նայեց և, իր գլուխը շարժելով, դարձավ դեպի մեզ:

Արդեն մութն էր, որ հասանք վանահայր վարդապետի բնակարանը, որն այցելողների հյուրանոցն էր միաժամանակ: Մի սարսափելի ճիչի հետ մթության մեջ պայթեց հրացանը, որի գնդակն ուղղակի անցավ մեր երեքիս առաջով, եթե մի քայլ առաջ լինեիք, ով գիտե ինչ պիտի լիներ մեր վիճակը:

Պարզվեց, որ վանահայրը բացակա է, և ծառան, վախենալով, թե եկողները ավագակներ են, դիմել է անտեղի ինքնապաշտպանության:

– Տո՛ւ,– ասաց Օհաննեսը ծառային, բերդանկա հրացանը տեսնելով,– մի

գյուղով երեք բանաստեղծ պիտի սպանեի՞ր:

– Լավ պրծաք, ըսել է՝ ձեր վերջը չէր եկել, – ամենայն անտարբերությամբ պատասխանեց ծառան:

Վաղ առավոտից սկսեցինք թափառել պանծալի ավերակների մեջ: Օհաննեսը հիացմունքով և ուշով դիտում էր ամեն մի բեկոր՝ արվեստի կնիք կրող: Լուռ, մտասույզ, թափառում էր՝ անցյալի հետ ներքին խոսակցությամբ տարված. կանգնում էր հրաշակերտ շենքերի առաջ, հայացքը լարած նայում էր սյուների, կամարների, քանդակների, ապա աչքերը գոցում և ականջները լարում, կարծես մի երաժշտություն էր լսում, ո՛չ սովորական, ո՛չ այս աշխարհից:

Անին իր վեհասքանչ հարտարապետությամբ շատ մեծ տպավորություն թողեց Օհաննեսի վրա: Երբ մեկնում էինք Անիից և պարիսպներից դուրս էինք արդեն, Օհաննեսը վերջին անգամ նայեց Անիին և ասաց.

– Ինչքա՛ն մարդ պիտի անբան-անասուն լինի, որ ձեռք բարձրացնի այս հրաշալիքների վրա:

– Մի՞թե այս գեղեցկությունը պիտի մեռնի առանց հետք թողնելու հայկական և ուրիշ ժողովուրդների արվեստի վրա:

– Այսօր զարգացման ի՛նչ աստիճանի հասած կլինեք մեր արվեստը, եթե թուրք-թաթար գեղերը չքայքայեին մեր ժողովրդին:

1903-1905 թվականները հայ ժողովրդի համար ծանր տարիներ էին: Յարական հայահալած քաղաքականությունը ավելի խստացված շարունակվում էր: Փոխարքա իշխան Գուլիցինը հայերին ատելու մեջ ինքնամոռացության հասած՝ անվերջ չարիքներ էր նյութում հայ ժողովրդին:

Յարն ու իր ռեակցիոն չինովնիկները հայկական դպրոցներն ու կուլտուրական հիմնարկները փակելուց չհագեցած, բռնի խլեցին հայ եկեղեցու բոլոր կալվածները, որ դարերով նվիրված էին հայ ազգի կողմից Էջմիածնի ու կաթողիկոսության պահպանման համար և հոգալու հայ ժողովրդի կրոնական ու կրթական կարիքները:

Նայ ժողովուրդը, ամենուրեք, զենքը ձեռքին դիմավորեց հափշտակիչներին, և երկուստեք արյուն հոսեց: «Նայ ժողովուրդը հեղափոխական է, ձգտում է Ռուսաստանից բաժանվել, ուզում է իր պետությունը հիմնել Կիլիկիայից մինչև Ռոստով-Նախիջևան», նշում էին մանր ու խոշոր գուլիցիները և պրովոկատոր մամուլը՝ արդարացնելու համար պետության դաժան արարքները հայերի վերաբերմամբ: Բանտերը

լցրին հազարավոր հայերով և ձեռք զարկեցին մի դիվական գործի՝ թուրք մասսաները գրգռեցին և զինեցին հայերի դեմ... սկսվեցին հայ-թուրքական արյունոտ կռիվները... Օհաննեսը ամբողջ եռօրյամբ կլանված էր մի կերպ վերջ դնելու այս անմիտ եղբայրասպանությանը, որ ծառայում էր միայն ցարերի բռնակալության հարատևման գործին: Այդ ժամանակներին էր, որ նա հայ զինված գյուղացիների գլուխն անցած, Լոռում, գնում է հարևան թուրքերի մոտ և հաշտության դաշն կնքում, որով այդ շրջանի խաղաղությունը պահպանվում է:

Այս տարիներին ես հաճախ հանդիպում էի Օհաննեսին Թիֆլիսում, Ալեքսանդրապոլում, Երևանում, Էջմիածնում:

1906 թվին, ամառը, հուլիսին, գնացի Դսեղ գյուղը՝ Թումանյանի մոտ հյուր: Նա ամբողջ ընտանիքով Դսեղում էր: Ապրում էին պապենական հին տան մեջ, որի վրա նա փայտաշեն մի հարկ էր կառուցել:

Մեծ ընտանիքը կառավարում էր Օհաննեսի մայրը՝ պատկառելի Նանին, շերեփը ձեռքը, իբրև իշխանական գավազան, հրամայում էր մեծին ու պստիկին: Առավոտից մինչև ուշ երեկո ծովս էր քարձրանում Օհաննեսի երդիկից. ամբողջ օրը թոնիրների ու օջախների մեջ կրակ կար, նրանց վրա եփվում էին կերակրի կաթսաները:

Լոռումն են. Սարոյի, Սաքոյի, Անուշի հայրենիքում. Օհաննեսի հետ, նրա հարկի տակ: Ի՛նչ կար ավելի քաղցր, քան այդ ժամերը: Օհաննեսի հետ շրջում ենք Դսեղ գյուղում, նրա շրջակայքը: Տին, հնադարյան գյուղ է Դսեղը, ամեն կողմ անցյալի բեկորներ: Գնում ենք գերեզմանատունը. այցելում ենք Օհաննեսի հոր շիրիմին. Օհաննեսի աչքերն արցունքոտվում են. ութ տարի է անցել հոր մահից, բայց վիշտը չի անցել: Եվ նորից, նորից պատմում է նա ինձ իր սքանչելի հոր մասին: Ազնվական, բարի, սիրող սրտով մարդ, բանաստեղծական հոգով:

«Ինչ որ կա իմ մեջ լավ բան՝ հորիցս է», – ասում է նա:

Գնում ենք Բարձրաքաջ Ս. Գրիգորի հոյակապ վանքը տեսնելու, մեր միջնադարյան ճարտարապետության մի փառավոր կոթող:

Գնում ենք լինը տեսնելու, որ դսեղցիք, լոռեցուն հատուկ հիպերբոլով «Օովեր» են կոչում: Բարձրանում ենք մի գառիվեր, որտեղից սկսվում են Մարցի չքնաղ անտառները:

Օհաննեսի մանկության և խաղերի վայրերն են սրանք:

Ամեն կողմից դեպի երկինք են մլարվում լեռնագագաթները. լանջերը՝

անտառապատ, բարձր ժայռերի վրա հսկա ծառեր կան, ավելի բարձր՝ արծվի բները: Ձորակներից ծուխ է բարձրանում. հովիվների բինաներն են, ուր ապրում են աժդահա սաքոները:

Օհաննեսը ցույց է տալիս լեռները. ահա Չաթինդաղը, որի գլխին մշտապես հավաքվում են մթին ամպեր, և ամեն օր որոտ ու կայծակ կա: Ահա՛ Քոշաքարա սարը, ուր լիքն է եղնիկներով, որոնց ետևից մանուկ Օհաննեսը վազել է օրնիբուն:

Գյուղի շուրջը բազկատարած շառաչում են «կանաչ, վիթխարի ընկուզենիները». և արդյոք որի՞ տակ Օհաննեսը օրհնություն ստացավ գյուղի մեծերից:

Ձիեր նստած թափառում ենք Լոռվա գյուղերը: Գնացինք Օձուն, Սանահին, Նաղպատ և այլուր:

Շրջեցինք գրեթե Լոռվա մեծ մասը:

«Մի գրողի հանաչելու համար պետք է լինել նրա հայրենիքում», – այսպիսի մի միտք է հայտնել Գյոթեն:

Լոռին նահապետական մի ինքնամփոփ աշխարհ է. հեքիաթի, առասպելի մի վիպաշխարհ, դյուցազնական աշխարհ. նրա ամեն մի անկյունը՝ ավանդավեպ, ամեն քարը՝ խոսող հերոսական անցյալից:

Ահեղագոչ Դեբեդ (Դև–բեդ) գետի հին կամրջի վրա ահա նստել է մի գուսան՝ մի աշուղ և պատմում է ու սագերգում դևերի և մարդկանց միջև եղած հին կռիվների, նաև ժողովրդի ծոցից դուրս պոռթկած կտրիճ ըմբոսների նոր կռիվները հարստահարող թավաղների դեմ, կառավարության բռնակալ և կեղեքող պաշտոնյաների դեմ:

Օհաննեսը գուսանի բերնից առնում է խոսքը և ոգևորված պատմում է ինձ Չոփոտի տղոց պատմությունը: 80-ական թվականներին հարստահարող կալվածատերերի դեմ ըմբոստանում է Չոփոռենց տղոց մեծ եղբայրը՝ Մողոմոնը, սպանում է թավաղին և երեք եղբայրների հետ դաչաղ է ընկնում սարերը: Նրանց միանում են ուրիշ դժգոհներ, կտրիճներ: Տարիներով ցարի կառավարությունն իր ստրաժնիկներով, կազակներով չի կարողանում նրանց բռնել:

Օհաննեսը պատանի հասակից տենչացել է գրել մի պոեմ՝ նրանց հերոսական կռիվների մասին. «Տառաչանք» պոեմի զարմանալի գեղեցիկ հատվածն այդ չիրականացված պոեմի թանկագին մնացորդն է:

Քաջությունը, իգիթությունը լոռեցու հատկություններն են: Օհաննեսի նախահայր պապը Լոռվա ձորերի և անտառների նահապետ քաջ Նովա-

կիմն է՝ Մենրաբայան-Թումանյան Նովակիմը, որի մասին հումերական ոճով գրում է Խաչատուր Աբովյանը¹²:

Մի հսկա, ժայռեղեն տղամարդ, որը պաշտպանում է Լոռին անթիվ հաղթանակող կռիվների մեջ, լեզգիների և ղզլբաշների ավարառու, ավերող արշավախմբերից:

Ինքը՝ Օհաննեսը, քաջ մարդ էր, լավ հրացանաձիգ, որսկան:

Երբ շրջում էինք գյուղերում, բոլոր գյուղացիք ճանաչում էին Օհաննեսին և խորին հարգանքով էին վերաբերվում դեպի նա: Օհաննեսը գրեթե ճանաչում էր բոլորին, մանավանդ տարեց լոռեցիներին, զրույց էր անում նրանց հետ, կատակում Լոռվա համով-հոտով քարքառով:

Գիտեր նրանց շատերի կենսագրությունից դեպքեր, ծիծաղաշարժ անցքեր նրանց հովվական կյանքից, արջերի հետ ունեցած նրանց գոտեմարտությունից:

Լոռում Օհաննեսն իր տարերքի մեջ էր: Այս հույակապ բնության մեջ, այս՝ ավանդություններով, առասպելներով, հիշատակներով լի չքնաղ սարերում ու ձորերում նա բազմապատկվել էր կյանքով, ապրում էր ամեն մի քարն ու քուր, ճանաչում էր ամեն մի խորշը, անտառը, աղբյուրը, որոնց հետ նվիրական հուշերով կապված էր իր մանկությունն ու պատանեկությունը: Նա գիտեր նրանց մասին անթիվ զրույցներ, դեպքեր, դրվագներ և գիտեր Լոռվա հինավուրց և նոր պատմությունը բոլոր մանրամասներով:

Օհաննեսը ցույց տվեց բարձրաբերձ, վիթխարի ժայռերի մեջ այն քարայրները, որտեղից վերջին տարիներս հայ հին ձեռագրեր հանեցին: Այդ ձեռագրերը մեր պապերը, թուրքերի ավերումներից փրկելու համար, թաքցրել էին այդ անմատույց այրերի մեջ:

Դյուցազնական-նահապետական Լոռին իր շքեղ բնությունով, իր ավանդներով ու սովորույթներով, նրա հինավուրց ժողովուրդն իր կենսահայացքով, իր ցավերով, նաև իր պայքարով՝ ազատության և երջանկության համար, եղան Օհաննեսի ներշնչարանը: Այստեղից է հորդահոս գալիս Օհաննեսի ստեղծագործության աննախընթաց ժողովրդայնությունը:

Օհաննեսի լեզուն, ոճը, պայծառությունն այս չքնաղ երկրի, անհուն, դարավոր ֆոլկլորից է:

Օհաննեսն իր բոլոր հոգով, իր հոգու բոլոր կրքով ու կրակով սիրում էր Լոռին:

Այս հզոր սերը բոցավառեց, թևավորեց նրա երևակայությունը, գեղեց-

կացրեց նրա ստեղծագործությունները: Իր հրաշագեղ հայրենիքն իր աշխատող ու պայքարող ժողովրդով բանաստեղծորեն վերակառուցվեց նրա անմահ գործերի մեջ:

Ինչպես ասացի, Լոռին Օհաննեսի անհուն ներշնչարանն էր, ինչպես մեծահոռչակ բանաստեղծ Միստրալի համար էր՝ խաղողի և ձիթենու այգիներով, հուռթի և հնագեղ հիշատակներով հարուստ իր Պրովանսը, որը նրա չքնաղ «Միրեյ» պոեմի մեջ, պրովանսական «Անուշի» մեջ, մարմնացավ ու անմահացավ:

Եվ միայն այս ճանապարհով է, ժողովրդայնական արվեստի ճանապարհով, որ անձուկ հայրենիքների և փոքր ժողովուրդների բուսահողից ծնված բանաստեղծները դառնում են համամարդկային մեծություններ, ինչպիսին են Միստրալը և Թումանյանը:

Եվ ինչպե՛ս Թումանյանը ներդաշնակվում էր Լոռվա պեյզաժին՝ բնանկարին, նրա մարմնից մարմին առած, նրա հոգուց հոգի առած: Կարծես Իրանի բանաստեղծ Տաֆիզն էր մտորում Շիրազի վարդաստաններում կամ Պուշկինն էր թափառում Ռուսաստանի քաղմաշառաչ անտառների և ծավալուն գետերի եզերքներով:

Նա Լոռին սիրում էր այնպես, ինչպես սիրահար, ռոմանտիկ պատանին սիրում էր իր երագների կույսին: Ո՛չ մի ձեռք չպիտի դիպչի նրան: Ո՛չ մի օտար շունչ, ոչի՛նչ չպիտի աղարտի նրա նվիրական կուսական գեղեցկությունը:

Եվ Օհաննեսը Ջոն Ռեոսկինի պես տխրում էր, որ երկաթուղի է անցնում չքնաղ Ալպերի վրայով, Լոռվա ձորերով, կուսական անտառներով, որ տեխնիկական ոչնչացնում է եղնիկներին, թռչուններին, հովվերգությունը, լուսությունը, խորհրդավորությունը...

Օհաննեսի մշտավառ երազն էր՝ Դսեղում կամ Լոռվա մի ավելի նկարչագեղ վայրում շինել մի վիլլա, գրադարանը տեղափոխել այնտեղ և բնական ու հոգեկան իր միջավայրում պարապել և ավարտել «Տազարան բլբուլը», «Սասունցի Դավթի» շարունակությունը:

Մենք թափառելիս, կես-լուրջ, կես-կատակ, վիլլայի համար պատշաճ վայր էինք փնտրում:

Թումանյանի այս տենչը չիրականացավ քաղաքական հեղհեղուկ վիճակի և այլ պարագաների պատճառով:

1908 թվի դեկտեմբեր ամսին, ցարական ժանդարմերիան Օհաննեսին և ինձ ձերբակալեց և, զանազան հակապետական մեղադրանքով, վեց ամիս

պահեց Թիֆլիսի Մետեխի բանտում¹³: Կամերաներով դրացի էինք իրար: Բանտում լրացավ, փետրվար ամսին, Օհաննեսի 40-ամյակը: Այդ առիթով նա գրեց «Վայրեջք» գեղեցիկ բանաստեղծությունը: Մենք տխրության ու ուրախության խառը զգացմունքով տոնեցինք նրա տարեդարձը: Բանտում նա գրեց նաև հրաշալի «Մի կաթիլ մեղր» առակը:

1911 թվին, ամառը ես ստիպված եղա փախչել արտասահման՝ ցարական հետապնդումներից ազատվելու համար: Թիֆլիսից դուրս եկա հունիսի վերջին, Ղազարոս Աղայանի թաղման օրը: Թաղումից հետո Թումանյանի հետ գնացինք իրենց մոտ¹⁴:

Տխուր, սգավոր օր էր: Նավիտյան գրկվեցինք մեր սիրելի Նահապետից, և ես էլ պիտի թողնեի հայրենիքս, և թերևս անդարձ: Աննկարագրելի են այդ հրաժեշտի ծանր վայրկյանները:

Արդեն ուշ գիշեր էր:

Վերջին անգամ մենք գրկեցինք իրար. երկուսս էլ լուռ էինք. ո՛չ մի խոսք:

Այս եղավ մեր վերջին տեսակցությունը:

Թումանյանը կյանքով բռնկված մարդ էր: Մեծ տեմպերամենտի տեր: Նրա էությունն ամբողջովին քաղձանք էր, տենչանք, ցանկություն: Նրա սիրտը անկուշտ էր և անհագ, ուզում էր ամեն բան ունենալ, ամեն բանի հասնել, ամեն տեղ լինել: Ուզում էր և՛ գրել, և՛ հասարակական, և՛ քաղաքական գործիչ լինել, այն էլ, իհարկե, առաջին կարգի: Ամփոփվելու ժամեր չուներ, միշտ խնեված էր վեճերի, ժողովների, քեֆերի մեջ: Նասարակությունը քաշում էր նրան դեպի իրեն, և ինքն էլ ձգտում էր դեպի նա, և բոլորվում էր նրա շուրջը: Նասարակության զարդն էր նա, խնջույքների, հրավերների հոգին, շողշողուն ջահը: Ամենուրեք թամադա էր նա՝ անգերազանցելի թամադա: Ամենից հարգված, ամենից սիրված էր նա: Ով որ նրան մի անգամ տեսներ, կուգեր շարունակ տեսներ: Նրա հետ լինելը, նրա գրույցները, կատակները, սրախոսությունները լսելը՝ գերագույն հաճույք էր: Ուր որ գնար, զվարճությունը հետն էր տանում. նրա հետ եղողը մոռանում էր, թե աշխարհում վիշտ ու ցավ գոյություն ունի:

Նա հարբեցնում էր խնջույքներին ո՛չ թե գինիով, այլ իր հումորով, իր կախարդիչ լեզվով, մտքի, խոսքի, հաշակի հմայիչ գյուտերով: Թվում էր, թե Օհաննեսը իրեն բախտավոր պիտի զգար՝ ունենալով հասարակության հարգանքը, կանանց սերը, գրասեր երիտասարդության պաշտամունքը և փառք ու համբավ: Սակայն դժգոհ էր նա իրենից, իր վարած կյանքից: Նա

ուզում էր գրել, ստեղծագործել էր ուզում նա: Ինչ որ տվել էր, համարում էր թույլ, թերի նախափորձ՝ ո՛չ իրեն հոգին բովանդակ արտահայտող: Ուզում էր գրել «Տազարան բլբուլ», ուր պիտի գեղեր իր եռթյունը: Արևելքի «Ֆաուստը» պետք է լիներ նա: Ուզում էր գրել «Արտավազդ» անունով մի դրամա՝ հայոց միֆական անցյալից, շեքսպիրյան համարժեքով: Ուզում էր գրել «Սասնա ծռեր»՝ ամբողջ եպոսը՝ Ղոմերոսի կամ Ֆիրդուսու պես: Նա համոզված էր իր ուժերի կարողության մեջ: Բայց գրելու հարմար ժամանակ էր պետք, իսկ նա ժամանակ չուներ և, արդեն ժամանակի մասին գաղափար էլ չուներ: Ժամացույց չէր սիրում և չէր ուզում գործածել: Չէր սիրում չափված ժամանակով շարժվել: Երեխայի պես հավերժության ինքնազգացում ուներ և ներկան՝ միշտ ներկա, իսկ ինքը շոայլում էր թանկ ժամանակը և նրա հետ ավյո՛ն, եռա՛ նո, թա՛ փ ու կորո՛վ:

Ամենայն հշտությամբ Տովհ. Թումանյանը կարող էր ասել Օսկար Ուայլդի հետ. «Ես իմ տաղանդը գործ դրի գրականության մեջ, իսկ հանճարս շոայլեցի կյանքի մեջ»:

Շատ տարիներ հետո, տասնվեց տարի անց, երբ արտասահմանից վերադարձա հայրենիք, ավա՛ղ, չկար Օհաննեսը: Տազար կյանքով ապրող այդ հոյակապ մարդու փոխարեն տեսա մի անշուք հողակույտ և մի մեծ լռություն...